C-Quadrat Ampega Asset Management Armenia

2026 թվականի երկրորդ եռամսյակում կենսաթոշակային ֆոնդերից Կայուն եկամտայինի (CQFIX) եկամտաբերությունը կազմել է 2.1%, Պահպանողականինը (CQCON)՝ 5.3%, Հավասարակշռվածինը (CQBAL)՝ 6.5%:

2026 թվականի հունիսի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 8.2-8.7% եկամտաբերություն:

Կենսաթոշակային ակտիվների ընդհանուր արժեքը եռամսյակի ավարտին հասել է 774 միլիարդ դրամի, որի շուրջ 30%-ը կազմել է կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

2026 թվականի երկրորդ եռամսյակում, չնայած պահպանվող էական աշխարհաքաղաքական անորոշություններին, ֆինանսական շուկաները եռամսյակը հիմնականում ամփոփել են դրական արդյունքներով:

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2026Ե2

Ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա ամենամեծ ազդեցությունը ունեցել են տեղական ներդրումներից պետական պարտատոմսերը և ավանդները, իսկ արտասահմանյան ներդրումներից՝ բաժնային արժեթղթերը.

Եռամսյակի ընթացքում դրամի որոշակի արժևորումը դոլարի և եվրոյի նկատմամբ 0.7-1.0% բացասական ազդեցություն է ունեցել ֆոնդերի եկամտաբերության վրա:

Համաշխարհային և տեղական շուկաներում վերջին զարգացումներ

2026 թվականի երկրորդ եռամսյակում, չնայած պահպանվող էական աշխարհաքաղաքական անորոշություններին, համաշխարհային ֆինանսական շուկաներում գերակշռել են դրական սպասումները: Առաջին եռամսյակի բացասական արդյունքերից հետո շուկաները վերականգնվել են՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում ռազմական լարվածության ինտենսիվության թուլացմամբ և նավթի գնի նվազմամբ: Միաժամանակ արհեստական բանականության ոլորտի նկատմամբ ներդրումային հետաքրքրության վերականգնումը եռամսյակի ընթացքում նպաստել է տեխնոլոգիական ընկերությունների բաժնետոմսերի գների զգալի աճին:

Եռամսյակի ընթացքում Մերձավոր Արևելքում ընթացող հակամարտության ոչ էական ազդեցությունը արհեստական բանականության ենթակառուցվածքների և տվյալների կենտրոնների կառուցմանն ուղղված կապիտալ ծախսերի վրա հավելյալ դրական ազդեցություն է ունեցել ներդրողների վստահության մեծացման վրա:

Երկրորդ եռամսյակի ընթացքում 2026 թվականի համար տնտեսական աճի կանխատեսումները զարգացած և զարգացող երկրների համար նվազել են՝ հասնելով համապատասխանաբար 1.6% և 4.1%-ի: Միևնույն ժամանակ, 2026 թվականի գնաճի կանխատեսումները թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրների համար աճել են՝ համապատասխանաբար կազմելով 3.6% և 3.5%՝ արտացոլելով ստագֆլացիոն ռիսկեր:

12 ամսյա գնաճը 2026թ մայիսին



ԱՄՆ-ում գնաճը աշխարհաքաղաքական լարվածության ֆոնին մայիսին էլ ավելի է արագացել՝ հասնելով 4.2%-ի:

Եռամսյակի ընթացքում Քևին Ուորշի՝ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի (FED) նախագահի պաշտոնի ստանձնելուց հետո, մասնակցությամբ առաջին նիստի ընթացքում ակնհայտ դարձավ, որ տոկոսադրույքների նվազեցման՝ նրա նախկինում հայտարարած նպատակը մեղմվել է և այլևս օրակարգում չէ: 2026 թվականի հունիսի նիստում Դաշնային պահուստային համակարգը քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ՝ 3.50-3.75% մակարդակում: Հաշվի առնելով՝ թիրախից բարձր գնաճը՝ տոկոսադրույքի կանխատեսումների միջինը (median) մեծացել է՝ արտացոլելով տոկոսադրույքերի հնարավոր բարձրացում ընթացիկ տարում:

Ընթացիկ եռամսյակում Եվրոգոտում ևս գնաճը արագացել է՝ մայիսին հասնելով 3.2%-ի, ինչին ի պատասխան Եվրոպական կենտրոնական բանկը (ECB) 2026 հունիսին քաղաքականության տոկոսադրույքը բարձրացրել է 25 բազիսային կետով՝ սահմանելով 2.4%:

Պայմանավորված պահպանվող գնաճային ճնշումներով, մասնավորապես աշխատավարձերի աճով և էներգակիրների, հատկապես նավթի գների բարձրացման հետևանքով առաջացած գնաճային ռիսկերով՝ Ճապոնիայի կենտրոնական բանկը ևս բարձրացրել է քաղաքականության տոկոսադրույքը 25 բազիսային կետով՝ հասցնելով այն 1.0%-ի՝ 1995 թվականից ի վեր ամենաբարձր մակարդակին:

Քաղաքականության տոկոսադրույքը ընթացիկ եռամսյակի ավարտին



Գնաճի դանդաղման պայմաններում տնտեսության խթանման ու դրամավարկային քաղաքականության աստիճանական մեղմացման նպատակով՝ Ռուսաստանը եռամսյակի ընթացքում երկու անգամ նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ այն հասցնելով 14.25%-ի:

Չինաստանում գնաճը մայիսին շարունակել է պահպանվել համեմատաբար ցածր 1.2% մակարդակում: Չինաստանի ժողովրդական բանկը (PBoC) եռամսյակի ընթացքում քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը Հայաստանում 2026 թվականի մայիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած աճել է 11.7%-ով: Այս աճը, սակայն, շարունակել է կենտրոնացած մնալ տնտեսության մի քանի ոլորտներում. շինարարությունը գրանցել է 27% աճ, ծառայությունները՝ 15%, իսկ արդյունաբերությունը՝ շուրջ 10%: Միևնույն ժամանակ, առևտրի ոլորտում աճ չի արձանագրվել, իսկ արտաքին առևտուրը մնացել է թույլ՝ ներմուծման 2% և արտահանման 12% անկման պայմաններում:

Գնաճը 2026 թվականի հունիսին արագացել է՝ հասնելով 5.1%-ի և գերազանցելով գնաճի թիրախային մակարդակը: Այնուամենայնիվ, ՀՀ ԿԲ-ն քաղաքականության տոկոսադրույքը եռամսյակի ընթացքում պահել է անփոփոխ՝ 6.50% մակարդակում: Ըստ ՀՀ ԿԲ խորհրդի, առկա անորոշությունների պայմաններում դիտարկվել են ինչպես Ա տիպի սցենարներ՝ կապված համաշխարհային չեզոք տոկոսադրույքների հնարավոր աճի, ներքին ավելցուկային պահանջարկի և գնաճային սպասումների արագացման ռիսկերի հետ, այնպես էլ Բ տիպի սցենարներ՝ պայմանավորված համաշխարհային աճի դանդաղմամբ, արտահանման

առանձին ուղղություններում խնդիրների արդյունքում գնանկումային ռսիկերի ձևավորմամբ և ՀՀ ռիսկի հավելավճարի նվազմամբ[1]:

Համաշխարհային բաժնային արժեթղթերը եռամսյանկը հիմնականում ամփոփել են դրական արդյունքներով՝ առավելապես տեխնոլոգիական հատվածի բարձր կատարողականով պայմանավորված:

Եռամսյակի ընթացքում զարգացող շուկաների բաժնետոմսերը գրանցել են 24.1% եկամտաբերություն՝ գերազանցելով զարգացած շուկաների բաժնետոմսերին, որոնք արձանագրել են 13.9% եկամտաբերություն:

ԱՄՆ բաժնետոմսերի շուկան առաջին եռամսյակի բացասական արդյունքներից հետո վերականգնվել է՝ երկրորդ եռամսյակի ընթացքում գրանցելով 15.2% աճ: Եկամտաբերության վրա ազդող հիմանական գործոնները եղել են ֆինանսական բարձր արդյունքները, արհեստական բանականության զարգացմանը ուղղված շարունակական ներդրումները և աշխարհագրական լարվածության թուլացման արդյունքում ռիսկի հավելավճարի նվազումը:

Նման զարգացումների ֆոնին Եվրոպական բաժնետոմսերը եռամսյակն ամփոփել են 15.7% եկամտաբերությամբ:

Եռամսյակի ընթացքում բացառություն են կազմել չինական բաժնետոմսերը, որոնք եռամսյակն ամփոփել են բացասական արդյունքներով՝ -6.4%՝ պայմանավորված տնտեսական աճի դանդաղմամբ և ներքին պահանջարկի և ներդրումների թուլացմամբ:

Ճապոնիայում բաժնետոմսերի շուկան գրանցել է վերջին տասնակմյակների ընթացքում ամենաբարձր եռամսյակային աճը՝ 37.3%՝ հիմնականում պայմանավորված արհեստական բանականության և կիսահաղորդիչների արդյունաբերության ոլորտների արժեթղթերի գների աճով:

Պայմանավորված ներդրողների՝ ավելի ապահով ակտիվներից դեպի առավել ռիսկային ակտիվներ տեղաշարժով՝ հաշվետու եռամսյակում համաշխարհային պարտատոմսերի շուկայում արձանագրվել է չափավոր դրական եկամտաբերություն՝ գնաճի և էներգակիրների գների շուրջ անորոշության պայմաններում: ԱՄՆ պետական պարտատոմսերը երկրորդ եռամսյակն ամփոփել են 0.3%, իսկ եվրոպական պետական պարտատոմսերը՝ 1.9% եկամտաբերությամբ:

Համաշխարհային ներդրումային դասի պարտատոմսերը (investment grade) եռամսյակն ամփոփել են 0.9%, իսկ ոչ ներդրումային դասի պարտատոմսերը՝ (high yield) 3.5% եկամտաբերությամբ:

Եռամսյակի ընթացքում հումքային ապրանքների գները նվազել են՝ գրանցելով 8.1% անկում՝ պայմանավորված հիմնականում էներգակիրների գների նվազմամբ: Էներգակիրները եռամսյակը ամփոփել են է 13.3% անկմամբ, որը հիմնականում պայմանավորված է եղել

[1] Դրամավարկային քաղաքականության զեկույց (2026թ. 2-րդ եռամսյակ)

Մերձավոր Արևելքի հակամարտությունից բխող նավթի և գազի մատակարարման շղթաներում խնդիրների մեղմացմամբ: Այս պայմաններում Էներգակիրներից Brent տեսակի նավթի գինը էական չափով նվազել է՝ գրանցելով 43.7% անկում: Եռամսյակի ընթացքում թանկարժեք մետաղների եկամտաբերություն ևս բացասական է եղել՝ կազմելով 15.7%: Արդյունաբերական մետաղները եռամսյակը ամփոփել են 1% եկամտաբերությամբ, իսկ գյուղատնտեսական ապրանքները՝ 3.1% անկմամբ:

Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական շուկայական ինդեքսների եկամտաբերությունների 2026 թվականի դինամիկան[2]



2 AMGOV_5-10, AMGOV_10-20, AMGOV_20I-ի համար աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ: Մնացած արտասահմանյան ակտիվների աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):

2026 թվականի երկրորդ եռամսյակի եկամտաբերության մեկնաբանություն

2026 թվականի երկրորդ եռամսյակը կենսաթոշակային ֆոնդերի տեղական և արտասահմանյան ներդրումները հիմնականում ամփոփել են դրական արդյունքներով: Ընթացիկ եռամսյակում ամենաբարձր եկամտաբերությունը գրանցել են տեղական և արտասահմանյան բաժնային պորտֆելները, և ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերը: Դրամի որոշակի արժևորումը դոլարի և եվրոյի նկատմամբ եռամսյակի ընթացքում բացասական ազդեցություն է ունեցել ֆոնդերի եկամտաբերության վրա:

Նման զարգացումներով պայմանավորված՝ 2026 թվականի երկրորդ եռամսյակը կենսաթոշակային բոլոր ֆոնդերը ամփոփել են բարձր արդյունքներով: Ֆոնդերից Կայուն եկամտայինը (CQFIX) ունեցել է 2.1%, Պահպանողականը (CQCON)՝ 5.3%, Հավասարակշռվածը (CQBAL)՝ 6.5% եկամտաբերություն:

CQFIX եռամսյակային եկամտաբերություն



CQCON եռամսյակային եկամտաբերություն



CQBAL եռամսյակային եկամտաբերություն



2026 թվականի հուսնիսի վերջի դրությամբ ֆոնդերի ակտիվների 67-83%-ը ներդրված է եղել Հայաստանում, այնպիսի ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են պետական և կորպորատիվ պարտատոմսերը, ավանդները, բաժնային արժեթղթերը և այլընտրանքային ներդրումները: Ակտիվների մնացած 17-33%-ը ներդրված է եղել արտասահմանյան բաժնային և պարտքային արժեթղթերում:

CQFIX ակտիվների կառուցվածքը



CQCON ակտիվների կառուցվածքը



CQBAL ակտիվների կառուցվածքը



- Ավանդներ և դրամական միջոցներ
- ՀՀ պետական պարտատոմսեր
- Տեղական կորպորատիվ պարտատոմսեր
- Արտասահմանյան պարտքային արժեթղթեր
- Արտասահմանյան բաժնային արժեթղթեր
- Տեղական բաժնային արժեթղթեր
- Այլընտրանքային ներդրումներ

Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների գերակշիռ մասը կազմել են ՀՀ պետական պարտատոմսերը և արտասահմանյան բաժնային ներդրումային ֆոնդերը: Իրենց մեծությամբ հաջորդը եղել են բանկային ավանդները, դրամային կորպորատիվ պարտատոմսերն ու արտասահմանյան պարտքային ներդրումային ֆոնդերը: Ներդրումների ավելի փոքր մասն են կազմել տեղական այլընտրանքային ներդրումները և տեղական բաժնետոմսերը:

Բաժնային ակտիվների եկամտաբերությունը ընթացիկ եռամսյակում



[3]2026 թվականի երկրորդ եռամսյակում գլոբալ և զարգացած երկրների բաժնետոմսերն ունեցել են համապատասխանաբար 15.1% և 13.9% եկամտաբերություն:

ԱՄՆ բաժնետոմսերը նույն ժամանակահատվածում գրանցել են շուրջ 15.2% եռամսյակային եկամտաբերություն:

Այս եռամսյակում Պահպանողական և Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդերի արտասահմանյան բաժնային պորտֆելները, համաշխարհային շուկաներում վերջին զարգացումներով պայմանավորված, գրանցել են 17.4% և 17.3% եկամտաբերություն եռամսյակի ընթացքում:

Պարտքային ակտիվների եկամտաբերությունը ընթացիկ եռամսյակում



[4]Գլոբալ ներդրումային դասի պարտատոմսերը երկորդ եռամսյակում գրանցել են 0.9% եկամտաբերություն: Կենսաթաշակային ֆոնդերից Կայուն եկամտային, Պահպանողական և Հավասարակշռված ֆոնդերի արտասահմանյան պարտքային պորտֆելների եկամտաբերությունը ևս դրական է եղել՝ կազմելով համապատասխանաբար 1.9%, 2.2% և 0.4%:

Եռամսյակի ընթացքում դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի որոշակի արժևորմամբ պայմանավորված ընդհանուր արտարժութային ազդեցությունը ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա եղել է բացասական՝ 0.7-1%-ի չափով:

3 Աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):
4 Աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):

ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերություն ընթացիկ եռամսյակում



[5]Հայաստանի 5-10 տարի (AMGOV 5-10) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը կազմել է 3.1%, 10-20 տարի (AMGOV 10-20) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 4.0%, իսկ 20 տարուց ավել (AMGOV 20I) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 4.2%:

2026 թվականի երկրորդ եռամսյակում ֆոնդերի՝ Հայաստանի պետական պարտատոմսերի պորտֆելները ունեցել են 3.5%-3.7% եկամտաբերություն:

Ֆոնդերի ավանդային պորտֆելները ընթացիկ եռամսյակում գրանցել են 2.7% եռամսյակային եկամտաբերություն:

Ֆոնդերի՝ Հայաստանի ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը, ֆոնդից կախված, տատանվել է 2.9% - 3.7% միջակայքում:

Ֆոնդերի Հայաստանի ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը ֆոնդից կախված տատանվել է 4.6% - 5.2% միջակայքում:

Ֆոնդերի տեղական բաժնետոմսերը ընթացիկ եռամսյակը ամփոփել են բարձր դրական եկամտաբերությամբ՝ համապատասխանաբար 27.8% և 22.4% Պահպանողական և Հավասարակշռված ֆոնդերի համար:

5 Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ:

Ֆոնդերի երկարաժամկետ եկամտաբերությունը

Ֆոնդերի փայի հաշվարկային արժեքը



2026 թվականի երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերից Կայուն եկամտայինը ստեղծման պահից ունեցել է 8.2%, Պահպանողականը՝ 8.4%, իսկ Հավասարակշռվածը՝ 8.7% միջին տարեկան եկամտաբերություն:

Վերջին հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը Կայուն եկամտային ֆոնդի համար կազմել է 6.1%, Պահպանողականի համար՝ 7.4%, իսկ Հավասարակշռվածի համար՝ 7.9%:

Ստեղծման պահից եկամտաբերություն



Կենսաթոշակային կուտակումների գնողունակությունը ստեղծման պահից ավելացել է 126% - 141%-ով՝ ֆոնդերի՝ գնաճից բարձր եկամտաբերության շնորհիվ:[6]

2026 թվականի հունիսին կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 165%-180% եկամտաբերություն: Նույն ժամանակահատվածում կուտակային գնաճը կազմել է շուրջ 39%:

[6] Գնաճով ճշգրտված եկամտաբերությունը հաշվարկվել է որպես կուտակային անվանական եկամտաբերության և կուտակային գնաճի տարբերություն: Որպես գնաճի ցուցանիշ հիմք է ընդունվել Հայաստանի Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված սպառողական գների ինդեքսը

Կենսաթոշակային ակտիվների մեծությունը



2026 թվականի հունիսին Ցե-Կվադրատ Ամպեգայի կողմից կառավարվող կենսաթաշակային ֆոնդերի ավելի քան 462 հազար մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կազմել է 774 միլիարդ դրամ, որի շուրջ 30%-ը՝ 232 միլիարդ դրամ, կազմել է կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական ակտիվների դասերի[7] եկամտաբերություն

2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026M3
Term deposits AMD 14.4%	Government Bonds 20+ 35.5%	DM Equities 22.7%	Government Bonds 20+ 25.5%	DM Equities 26.9%	DM Equities 27%	DM Equities 12.6%	Term deposits AMD 10%	DM Equities 24.4%	Government Bonds 20+ 19.3%	DM Equities 21.6%	DM Equities 10.0%
Government Bonds 20+ 13.7%	Government Bonds 5-10 32.5%	Government Bonds 5-10 21.7%	Term deposits AMD 12.5%	Government Bonds 20+ 17.4%	Government Bonds 20+ 19.3%	Term deposits AMD 9.9%	Government Bonds 0-5 6.2%	Government Bonds 20+ 23%	DM Equities 19.2%	Government Bonds 20+ 20.3%	Government Bonds 5-10 6.1%
Term deposits USD 9.8%	Government Bonds 0-5 22.5%	Government Bonds 20+ 20.9%	Government Bonds 5-10 10.3%	Government Bonds 5-10 16.5%	Term deposits USD 14.1%	Government Bonds 0-5 4.4%	Government Bonds 5-10 2.4%	Government Bonds 5-10 17.1%	Government Bonds 5-10 15.2%	Government Bonds 5-10 17.0%	CQBAL 6.1%
Government Bonds 0-5 9.1%	CQFIX 15.9%	Government Bonds 0-5 15.2%	CQFIX 8.3%	CQBAL 14.3%	CQBAL 12.7%	Government Bonds 5-10 3.2%	Government Bonds 20+ -4.1%	CQBAL 16.5%	Government Bonds 0-5 12.9%	CQBAL 13.8%	Government Bonds 20+ 5.6%
CQFIX 7.9%	Term deposits AMD 15.3%	Term deposits AMD 14.6%	Government Bonds 0-5 7.7%	CQCON 13.8%	CQCON 11.8%	CQBAL 3.1%	CQFIX -4.5%	CQCON 16.3%	CQBAL 11.7%	Government Bonds 0-5 13.3%	CQCON 5.1%
Government Bonds 5-10 7.5%	CQCON 12.5%	CQBAL 14.2%	Term deposits USD 5.7%	CQFIX 10.7%	CQFIX 10.6%	CQCON 2.5%	CQCON -8.2%	Government Bonds 0-5 13.9%	CQCON 11.3%	CQCON 12.8%	Government Bonds 0-5 4.9%
CQCON 6.9%	CQBAL 12.2%	CQCON 14%	CQCON 4.9%	Term deposits AMD 10.6%	Term deposits AMD 10.1%	Government Bonds 20+ 0.7%	CQBAL -8.9%	CQFIX 12.6%	Term deposits AMD 9.2%	CQFIX 10.8%	Term deposits AMD 4.6%
CQBAL 5.2%	DM Equities 8.4%	CQFIX 11.9%	CQBAL 4.2%	Government Bonds 0-5 9.5%	Global IG Bonds 9.2%	CQFIX 0.4%	Term deposits USD -14.5%	Term deposits AMD 10.7%	CQFIX 9.0%	Term deposits AMD 9.6%	CQFIX 3.2%
DM Equities 1.6%	Term deposits USD 7.5%	Global IG Bonds 7.4%	Global IG Bonds -1.2%	Global IG Bonds 6.8%	Government Bonds 0-5 5%	Term deposits USD -4%	Global IG Bonds -16.2%	Global IG Bonds 5.7%	Term deposits USD 3.7%	Global IG Bonds 8.2%	Term deposits USD 2.0%
Global IG Bonds -3.2%	Global IG Bonds 2.1%	Term deposits USD 6.9%	DM Equities -7.9%	Term deposits USD 4.1%	Government Bonds 5-10 3.8%	Global IG Bonds -4.7%	DM Equities -32.4%	Term deposits USD 5.1%	Global IG Bonds - 1.7%	Term deposits USD 4.0%	Global IG Bonds - 0.2%

[7] Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ և Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination): Աղյուսակում ներկայացված հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը՝ Government Bonds – Պետական պարտատոմսեր, Term deposits – ժամկետային ավանդներ, Global IG Bonds - Գլոբալ պարտատոմսեր, DM Equities - Զարգացած երկրների բաժնետոմսեր:

Շուշաննա Առաքելյան, CFA

Ներդրումային Վերլուծաբան
ՅԵ-Կվադրատ Ամպեգա



Իգնատ Ֆրանգյան, CFA

Ռիսկերի Կառավարիչ
ՅԵ-Կվադրատ Ամպեգա

Ծանուցում

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ներդրում պարունակում է ռիսկեր, ֆոնդերի եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն կարող կանխորոշել ֆոնդերի հետագա եկամտաբերությունը:

Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշները ներառում են ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը և ենթադրում են բոլոր եկամուտների վերաներդրում:

Այս փաստաթուղթը ծառայում է բացառապես տեղեկատվական նպատակի և չի ներկայացնում որևէ հրապարակային առաջարկ ֆոնդի փայեր գնելու կամ վաճառելու: Սույն փաստաթղթում տեղ գտած տեղեկատվությունը պետք չէ դիտարկել որպես ներդրումային խորհրդատվություն:

Ընկերությունը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: